



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16103

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 165-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ ԿԳ/110-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Էդուարդ Ասլանյանին (արտոնագիր թիվ 499) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին 18.07.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Էդուարդ Ասլանյանը (արտոնագիր թիվ 499) 2015թ. սեպտեմբերից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 258-Ա/ԿԳ-16103 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Էդուարդ Ասլանյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16103):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 06-ին, ժամը՝ 18:42-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Էդուարդ Ասլանյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Էդուարդ Ասլանյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 20.10.2006թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.10.2016թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Էդուարդ Ասլանյանն ունի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. սեպտեմբերից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Էդուարդ Ասլանյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.10.2016թ. խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Էդուարդ Ասլանյանի (արտոնագիր 499, ստացված՝ 20.10.2006թ.) նկատմամբ 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել են կարգապահական վարույթներ (ավարտված վարույթներ), որոնցից մեկը կարճվել է արտոնություն կիրառվելու հիմքով, երկրորդով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն), տույժը մարվել է, և երրորդով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն), տույժը մարված չէ:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները

կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Էդուարդ Ասլանյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Էդուարդ Ասլանյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար երկու անգամ ենթարկվել է կարգապահական տույժի, ինչպես նաև այլ խախտման համար ևս ենթարկվել է կարգապահական տույժի, որը մարված չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Էդուարդ Ասլանյանին (արտոնագիր թիվ 499) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և

«Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Էդուարդ Ասլանյանի (արտոնագիր թիվ 499) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազեկել փաստաբան Էդուարդ Ասլանյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Մարտուն Փանոսյան